ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**02.09.2022թ. ԿՆՔՎԱԾ N «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Սիսիան «19» 10 2022թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պատասխանատու Ա. Հակոբջանյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով «02» սեպտեմբեր 2022թ. կնքված N «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9» պայմանագրի (այսուհետև պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սիսիանի համայնքի կարիքների համար N «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգը իրականացվել է Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով՝ ոչ առկա ֆինանսական միջոցներով: Վերոնշյալ պայմանագրի կատարման համար, թիվ 1 չափաբաժնի մասով նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, որից 192 500 (մեկ հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը ֆինանսավորվում է համայնքային բյուջեից, իսկ 157 500 (մեկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը պետական բյուջեից:

1.2 Հիմք ընդունելով N «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.13 կետերը՝ պայմանագրի Հավելված 2-ը (վճարման ժամանակացույց) փոխարինել համաձայնագրի Հավելված 1-ով (վճարման ժամանակացույց):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու տեղեկությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| **Սիսիանի համայնք** | **«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ** |
| ք. Սիսիան, Սիսական 31 | ք. Երևան, Թումանյան 32/1 |
| ՀՀ ֆին.նախ. գործ. վարչ. | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900292101285 | Հ/Հ 11500580197801 |
| ՀՎՀՀ 09215978 | ՀՎՀՀ 09802201 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ՝ | Տնօրեն՝ |
| Կ. Հովհաննիսյան | Հ. Անդրեասյան |

Հավելված N 1
«19» 10 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/9 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022, 2023թթ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 71351540 | Աղամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | 2022թ. | --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- | 192500 | 192500 | 192500 | 192 500 |
| | | | 2023թ. | 192500 | 192500 | 192500 | 350000 | 350000 | 350000 | 350000 | 350000 | 350000 | 350000 | 350000 | 350000 | 350 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Սիսիանի համայնք**
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978
Համայնքի ղեկավարի տեղակալ՝

Կ. Հովհաննիսյան ____________

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԱՍՏԻՃԱՆ» ՍՊԸ**
ք. Երևան, Թումանյան 32/1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11500580197801
ՀՎՀՀ 09802201
Տնօրեն՝

Հ. Անդրեասյան ____________
(ստորագրություն)